

**ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ՄՆՆԴԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ» ԾԱՌԱՅՈՒՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N ՀՀ ՆԳՆ ՀՄԱԾՁԲ-Ա-35/2026**

ք. Երևան

«18» 03 2026 թ.

**ՀՀ ներքին գործերի նախարարությունը**, ի դեմս ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի, որը գործում է ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ռեդի-Սթեդի» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Գայանե Մարգարյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«սննդի մատուցման» ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **15 աշխատանքային** օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

#### **4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է **160 000 000** (հարյուր վաթսու միլիոն ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

**4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ ըստ տեխնիկական բնութագրով սահմանված մատուցվող ծառայությունների համար նախատեսված միավոր գների համապատասխան:** Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 29-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

#### **5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (գրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## **6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

**Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը՝ 07.03.2026թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:**

**Սույն պայմանագրի առարկա հանդիսացող «Մենդի մատուցման» ծառայությունների ձեռքբերման նպատակով մրցակցային ընթացակարգով գնման գործընթացի արդյունքում պայմանագիր կնքվելու դեպքում՝ սույն պայմանագիրը կարող է դադարել գործել՝ Պատվիրատուի կողմից Կատարողին գրավոր տեղեկացնելու դեպքում:**

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի. առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջի զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 80 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:


**7.13 Չտարածել համատեղ աշխատանքի ընթացքում հայտնի դարձած պետական գաղտնիք պարունակող կամ սահմանափակ տարածման ծառայողական տեղեկությունները, ինչն օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է առաջացնել վարչական կամ քրեական պատասխանատվություն:**

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ. ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ներքին գործերի նախարարություն  
ք. Երևան, Նալբանդյան 130  
ՀՀ Ֆինանսների նախարարության  
գործառնական վարչություն  
Հ/Հ 900011049286  
ՀՎՀՀ 02882913  
Հեռ. 010 59-60-39  
Էլ. հասցեն՝ [gnumner@mia.gov.am](mailto:gnumner@mia.gov.am)



Ա. Ֆիդանյան  
ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար /  
(ստորագրություն)  
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ  
ք. Երևան, Բուռնազյան 7  
Բանկ՝ «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ  
Հ/Հ 220533332767000  
ՀՎՀՀ 00851011  
Հեռ. 043 412101  
Էլ. հասցեն՝ [info@artlunch.am](mailto:info@artlunch.am)



Գ. Մարգարյան  
«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի տնօրեն /  
(ստորագրություն)  
Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԿԻՐ - ՓՆՄԱՆ ՓԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

		Ծառայության			մատուցման	
գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	հասցե	ժամկետը**
«սնդի մատուցման» ծառայություններ եր CPV- 55511200/2	<p>Ստանդարտները պետք է մատուցվեն.</p> <p>1. մշտական տեղակայման, զրոգավորությունների և դաշտային պարապմունքների վայրերում՝ տաք սննդով,                  2. հասարակական կարգի պահպանության ծառայության վայրերում՝ արագ սնվելու հնարավորությամբ սննդի հավաքածուի տեսքով,                  Ծառայությունը մատուցման վայրը և հիմնական պայմանները՝</p> <p>1. Տաք սննդով.                  1.1 ՀՀ ՆԳՆ ոստիկանության գվարդիա՝ քաղաք Երևան, Թամանցիների 6-րդ նրբանցք, (մակերեսը՝ 90,55քմ) հասցեում գտնվող ճաշարան, սննդի բավարարման կանգնածների օրական միջին կողմնորոշիչ թվաքանակը՝                      - նախաճաշ՝ 17 ծառայող                      - ճաշ՝ 17 ծառայող                      - ընթրիք՝ 17 ծառայող</p> <p>1.2 ՀՀ ՆԳՆ ոստիկանության գվարդիա՝ քաղաք Երևան, Դավթաշեն 2-րդ թաղամաս 62/26 (մակերեսը՝ 571,8 քմ) հասցեում գտնվող ճաշարան, սննդի բավարարման կանգնածների օրական միջին կողմնորոշիչ թվաքանակը՝                      - նախաճաշ՝ 20 ծառայող                      - ճաշ՝ 20 ծառայող                      - ընթրիք՝ 20 ծառայող</p> <p>1.3 ՀՀ ՆԳՆ ոստիկանության գվարդիա՝ քաղաք Երևան, Ծովակալ Իսակովի 25 (մակերեսը՝ 670,9քմ) հասցեում գտնվող ճաշարան, սննդի բավարարման կանգնածների օրական միջին կողմնորոշիչ թվաքանակը՝                      - նախաճաշ՝ 21 ծառայող                      - ճաշ՝ 21 ծառայող</p>	դրամ	160 000 000	1	Ըստ տեխնիկական բնութագրի	Ծառայության մատուցման ժամկետը 07.03.2026թ. * մինչև 29.12.2026թ. ներառյալ**:

ՀՀ դրամ

	<p>- ընթերիք՝ 21 ծառայող</p> <p>1.4 ՀՀ ՆԳՆ ոստիկանության գվարդիա՝ Արմավիրի մարզ, ՀԱԷԿ-ի տարածքի, (նակերեւը՝ 17 քմ) հասցեում գտնվող ճաշարան: Սննդի բավարարման կանգնածների օրական միջին կողմնորոշիչ թվաքանակը՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- նախաճաշ՝ 30 ծառայող</li> <li>- ճաշ՝ 30 ծառայող</li> <li>- ընթերիք՝ 30 ծառայող</li> </ul> <p>1.5 ՀՀ ՆԳՆ ոստիկանության գվարդիա՝ քաղաք Երևան, Զուղայի 1/9: Սննդի բավարարման կանգնածների օրական միջին կողմնորոշիչ թվաքանակը՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- նախաճաշ՝ 2 ծառայող</li> <li>- ճաշ՝ 2 ծառայող</li> <li>- ընթերիք՝ 2 ծառայող</li> </ul> <p>1.6 ՀՀ ՆԳՆ ոստիկանության գվարդիա՝ Սյունիքի մարզ ք. Գորիս, Արևշատ 6/1: Սննդի բավարարման կանգնածների օրական միջին կողմնորոշիչ թվաքանակը՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- նախաճաշ՝ 9 ծառայող</li> <li>- ճաշ՝ 9 ծառայող</li> <li>- ընթերիք՝ 9 ծառայող</li> </ul> <p>1.7 ՀՀ ՆԳՆ ոստիկանության գվարդիա՝ Սյունիքի մարզ ք. Կասպան, Մուշեղ Հարությունյան 1Ա: Սննդի բավարարման կանգնածների օրական միջին կողմնորոշիչ թվաքանակը՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- նախաճաշ՝ 9 ծառայող</li> <li>- ճաշ՝ 9 ծառայող</li> <li>- ընթերիք՝ 9 ծառայող</li> </ul> <p>ՀՀ ՆԳՆ ոստիկանության գվարդիայի վերը նշված ստորաբաժանումներում սննդի բավարարման կանգնածների օրական միջին ընդհանուր թվաքանակը՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- նախաճաշ՝ 108 ծառայող</li> <li>- ճաշ՝ 108 ծառայող</li> <li>- ընթերիք՝ 108 ծառայող</li> </ul> <p>Զորավարժության և դաշտային և պարապմունքների վայրերում սննդի պատրաստման և մատուցման ծառայություն իրականացնելու համար կատարող պետք ունենա անհրաժեշտ քանակի պարենային ծառայության տեխնիկական միջոցներ, որոնց շահագործման և սպասարկման համար անհրաժեշտ բոլոր ծախսերը իրականացնում է կատարողը: Ընդ որում պատվիրատուի կողմից պետք է հատկացվեն դաշտային պայմանների</p>				
--	--	--	--	--	--

համար նախատեսված վրանք: Վրաններում ճաշատեսակների բաշխումը կարող է իրականացվել մեկանգամյա օգտագործման սպասքով (Lunch Box):

Անվա կտրվածքով օրական միջինը մինչև 20 սնվող ունեցող զորամասերի անձնակազմին տաք սննդով ապահովելու համար թույլատրվում է այլ ստորաբաժանման մշտական տեղակայման վայրից պատրաստի սնունդը տեղափոխել համապատասխան ջեմպահներով և սննդի համար նախատեսված տարաներով մինչև 15կմ՝ պահպանելով ճաշատեսակների սահմանված ջերմաստիճանն ու որակական հատկանիշները:

ՀՀ ՆԳՆ ոստիկանության գվարդիայի մշտական տեղակայման վայրերից դուրս շուրջօրյա մարտական ծառայություն իրականացնելու դեպքերում Կատարոն ապահովում է սննդի կազմակերպումը, պատրաստումը, սննդի առաքումը Ստացողի կողմից սահմանված սննդի առաքման վայրեր՝ կատարողի հաշվին, ինչպես նաև կատարողի տրանսպորտային միջոցներով՝ ՀՀ ողջ տարածքում:

Ստացողի կամ պահանջարկի փոփոխության դեպքերում, Կողմերն իրավունք ունեն փոփոխություններ կատարել ստացողների ցուցակում, այդ թվում ներառել կամ հանել Ստացողների ցուցակից փոփոխել Ստացողին մատուցվող Ծառայությունների ծավալը, փոփոխել Ծառայությունների մատուցման վայրերը:

Պարենավորվող անձնակազմի թվաքանակի վերաբերյալ տրված պահանջագիրը կարող է ճշտորտել հաշվի առնելով սննդի պատրաստման համար անհրաժեշտ ժամանակը, մինչև 50% շեղման դեպքում ոչ ուշ քան մինչև հաջորդ սննդի ընդունումից առնվազն 4 ժամ առաջ, իսկ 50%-ից ավել շեղման դեպքում՝ առնվազն 6 ժամ առաջ:

2. Հասարակական կարգի պահպանության ծառայության վայրերում՝ արագ սնվելու հնարավորությամբ սննդի հավաքածուի տեսքով.

ՀՀ ՆԳՆ ոստիկանության գվարդիայի մշտական տեղակայման վայրերից դուրս հասարակական կարգի պահպանության ծառայություն իրականացնելու դեպքերում Կատարողն ապահովում է սննդի կազմակերպումը, պատրաստումը, սննդի առաքումը Ստացողի կողմից սահմանված սննդի առաքման վայրեր՝ կատարողի հաշվին, ինչպես նաև կատարողի տրանսպորտային միջոցներով՝ ՀՀ ողջ տարածքում: Սնունդը Պատվիրատուի ներկայացուցիչներին հանձնելուց հետո՝ դրա պահպանության և տեղափոխման պայմանների, պիտանելիության ժամկետների խախտման, վնասման, կորստյան համար Կատարողը պատասխանատվություն չի կրում՝ եթե դա արդյունքն է Պատվիրատուի գործողությունների:

Արտաքին ծառայության (հասարակական կարգի պահպանության) ընդգրկված ոստիկանության գվարդիայի ծառայողների սննդի մատուցումը կատարվում է արագ սնվելու հնարավորությամբ սննդի հավաքածուի տեսքով, որը կարող է կատարվել նաև Կատարողի ենթակայության տակ գտնվող, ծառայության իրականացման վայրից 1.5 կիլոմետրից ոչ հեռու, հանրային սննդի ծառայությունների մատուցման այլ վայրերում՝ տաք սննդով, ընդ որում Պատվիրատուի պահանջագրի հիման վրա Կատարողի կողմից կտրամադրվեն քարտեր (կտրոններ) ըստ օրվա սնման ռեժիմի, որոնք Կատարողի ենթակայության տակ գտնվող հանրային սննդի ծառայությունների մատուցման վայրերում կերակրվելիս Ստացողները կտրամադրեն (կներկայացնեն) Կատարողին (Կատարողի ներկայացուցչին), որի դիմաց կկազմակերպվի նրանց պարենավորումը: Քարտերի կամ կտրոնների միջոցով մատուցված ծառայությունների ծավալը կհաշվառվի Կատարողի կողմից և կներառվի ներկայացվող ամսական հանձնման-ընդունման արձանագրություններում՝ համաձայն պայմանագրով սահմանված միավոր գների:

Արտաքին ծառայությանն ընդգրկված ՀՀ ՆԳՆ ոստիկանության գվարդիայի ծառայողների սննդի բավարարման կանգնածների ամսական միջին ընդհանուր թվաքանակը՝

- նախաճաշ՝ 6000 ծառայող
- ճաշ՝ 7000 ծառայող
- ընթրիք՝ 8000 ծառայող:

Պատվիրատուի անձնակազմի համար սահմանվում է օրվական 3 անգամյան սնունդ: Անձնակազմի սնվելու ժամերը որոշում է Պատվիրատուն:

Պարենային չափաքանակի էներգապարունակությունը երեքանգամյա սնման դեպքում բաշխվում է հետևյալ կերպ.

- նախաճաշին՝ 30%,
- ճաշին՝ 40%,
- ընթրիքին՝ 30%:

Կատարողը կարող է Պայմանագրի կատարման համար ներգրավել երրորդ անձանց, որոնց հետ կնքվող պայմանագրերը պետք է համապատասխանեցվեն սույն մրցույթի շրջանակներում կնքված Պայմանագրին և տեխնիկական բնութագրին, ընդ որում Կատարողն իր կողմից ներգրաված երրորդ անձի գործողությունների համար կրում է պատասխանատվություն, որպես սեփական գործողությունների համար: Երրորդ անձանց ներգրավումը կատարվում է միայն Պատվիրատուի հետ նախապես համաձայնեցնելուց հետո: Երրորդ անձանց կողմից Կատարողի

հանրեպ պարտականությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը չի ազատում Կատարողին Պայմանագրով իր կողմից ստանձնած պարտավորությունների կատարումից: Ընդ որում՝ Կողմերն ընդունում են, որ երրորդ անձանց կողմից մատուցված Ծառայությունների ընդհանուր ծավալը չի կարող գերազանցել մատուցվող Ծառայությունների ընդհանուր ծավալի 30 (երեսուն) տոկոսը:

ՀՀ ՆՊՆ ուստիկանության գվարդիայում մթերաբաշխման ցուցակը պետք է կազմվի մեկ շաբաթվա համար: Մթերաբաշխման ցուցակը կազմելու համար անհրաժեշտ է կիրառել մթերքների բանջարեղենաձավարեղենային հավաքակազմը (բանջարեղեն + ձավարեղեն \* 5 = 1660 գրամից ոչ պակաս), ինչպես սառը ուտեստների, առաջին և երկրորդ կերակրատեսակների, այնպես էլ արագ սնվելու հնարավորությամբ սննդի հավաքածուի համար:

Կատարողը՝ իր միջոցների հաշվին ձեռք է բերում և տեղադրում ինքնապատարկման հոսքագիծ, եթե այն առկա չէ կամ ենթակա է փոխարինման:

Ստացիոնար պայմաններում ծառայությունը մատուցելու նպատակով կատարողը պետք է ունենա անհրաժեշտ սպասք հետևյալ քանակներով՝

- 1) մեկ սնվողի համար
  - ափսե 1-ին ճաշատեսակի՝ ճենապակյա, կամ կիսաճենապակյա - 1 հատ,
  - ափսե 2-րդ ճաշատեսակի՝ ճենապակյա, կամ կիսաճենապակյա - 1 հատ,
  - անհատական փոքր ափսե՝ ապակյա, ճենապակյա կամ կիսաճենապակյա - 2 հատ,
  - սալաթաման փոքր՝ ճենապակյա կամ կիսաճենապակյա - 1 հատ,
  - սկյուտեղ՝ պլաստմանե, կամ պոլիպրոպիլենից - 1 հատ,
  - գավաթ թեյի՝ ապակյա, ճենապակյա կամ կիսաճենապակյա - 1 հատ,
  - գավաթ հյութի՝ ապակյա, ճենապակյա կամ կիսաճենապակյա - 1 հատ,
- 2) ինձգ սնվողի համար հետևյալ քանակներով՝
  - հացաման - 1 հատ,
- 3) յուրաքանչյուր սեղանին՝

					<p>- համեմունքի պարագաներ՝ աղաման, պղպեղաման՝ ապակյա, ճենապակյա կամ կիսաճենապակյա - 1 հատ:</p> <p>3. Յուրաքանչյուր ծառայողի համար նախատեսված անհատական սպասքի աշխատանքային ծավալը պետք է համապատասխանի ճաշացանկով նախատեսված ճաշատեսակի ելքի քանակին:</p> <p>Ճաշատեսակների բազմազանությունից ելնելով, սպասքի տեսակային և քանակը կարող է ավելացվել:</p> <p>Մենդատեսակների մատուցումը պետք է իրականացվի շաբաթական սննդի ճաշացանկով նախատեսված քանակների համաձայն և օրվա կարգացուցակով նախատեսված սննդի ընդունման ժամերին:</p> <p>Մատուցված ծառայության ընդունումը, դրա որակի, քանակի և պայմանագրի պահանջներին համապատասխանությունը, ինչպես նաև վերահսկողությունը Պատվիրատուի կողմից իրականացվում է ամեն օր:</p> <p>Ծառայության մատուցման համար անհրաժեշտ անձնակազմը պետք է համապատասխանեն հասարակական սննդի ոլորտին ներկայացվող սանիտարահամաճարակային, հիգիենայի և այլ պահանջներին:</p> <p>Ճաշարանի, արտադրամասերի, հիգիենայի և այլ պահանջներին պահեստների սանիտարահիգիենիկ վիճակի պատասխանատվությունը կրում է ծառայություն իրականացնող կազմակերպությունը: Ճաշարաններում սննդամթերքի և բանջարեղենի պահեստների սանիտարահիգիենիկ վիճակը, սննդի պատրաստումը, փոխադրումը և իրացումը կազմակերպել համաձայն «Հանրային սննդի կազմակերպություններին ներկայացվող հիգիենիկ պահանջների (ԼԿ և ՀՆ 2-III-4,2-01-2003):</p> <p>Կատարողը ծառայողներին հատկացվող պատրաստի ճաշատեսակների բաժանումը իրականացնելու է ճաշապահուում, մթերքի բաշխման ցուցակում նշված պատրաստի չափաբաժինների համապատասխան քանակություններից ոչ պակաս:</p> <p>Կատարողը անձնակազմին հատկացվող սննդամթերքի համար պետք է ունենա որակը հավաստող և անվտանգության վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր և ըստ պահանջի ներկայացնի Պատվիրատուին:</p> <p>Մենդի պատրաստման և մատուցման ծառայություն իրականացնող անձնակազմը ենթարկվում է պարտադիր և պարբերական բժշկական զննության, համաձայն ՀՀ կառավարության 27.03.2003թ. N 347-Ն որոշման:</p> <p>Կատարողը պարտավոր է նաև՝</p>
--	--	--	--	--	--

- ապահովել մատուցվող ծառայությունների համապատասխանությունը կյանքի և առողջության որակի ու անվտանգության պայմաններին, սննդամթերքի անվտանգության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջներին, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված սանիտարահամաճարակային անվտանգության պայմաններին («Այաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի՝ և դրա հիման վրա ընդունված սանիտարահիգիենիկ նորմերին, կանոններին, պետական ստանդարտներին, սանիտարահամաճարակային նորմերին, պահանջներին և այլն),

- օրենքի ուժով պետական գաղտնիք համարվող տեղեկությունները, որոնք կատարողին հայտնի են դառնում պայմանագրային պարտավորությունների կատարման ընթացքում, ենթակա չեն այլ անձանց փոխանցելուն,

- Պատվիրատուի հետ գրավոր համաձայնեցնել իր կողմից և իր միջոցների հաշվին նախատեսվող բոլոր աշխատանքներն ու միջոցառումները, այդ թվում ներդրման ենթակա սարքերի, սարքավորումների տեխնիկական բնութագրերը, սպասքի և այլ գույքի տեսականին, քանակները, կատարման ժամկետները և այլն: Ապահովել ապամոնտաժված, ինչպես նաև ծառայությունների մատուցման համար ոչ պիտանի գույքի, սարքավորումների հետ հանձնումը Պատվիրատուին,

- Ապահովել ծառայությունների մատուցման օբյեկտները մշտական՝ առնվազն 10 օրվա, սննդի պաշարներով՝ ըստ յուրաքանչյուր գորամասի սնվողների միջին քանակության (բացառությամբ 15 օրից պակաս պիտանելիության ժամկետ ունեցող սննդամթերքները),

- ծառայության պատշաճ մատուցման նպատակով ինքնուրույնաբար ձեռք բերել պարենամթերքը, նյութերն ու ռեսուրսները, կոմունալ ծառայությունները և այլ անհրաժեշտ պարագաները,

- վճարել ծառայության մատուցման ժամանակահատվածում իր կողմից օգտագործվող տարածքների կոմունալ (էլեկտրաէներգիա, ջուր, գազ և այլն) և աղբահանության ծախսերը՝ համաձայնեցնելով Պատվիրատուի հետ,

- Ծառայությունների մատուցումն իրականացնել սննդամթերքի անվտանգության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան և ընդգրկված սննդի շղթայի օպերատորների հարմար նախատեսված տվյալների բազայում՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի 17-րդ հոդվածով սահմանված պահանջի: Կատարողի կողմից սպահանջվում են ՀՀ օրենսդրությամբ սննդամթերքի արտադրության, պահման, տեղափոխման,

իրացման, փոխադրման, ոչնչացման, օգտահանման գործընթացներին ներկայացվող պահանջները,

- մատակարարել միայն համապատասխանության գնահատման ենթարկված սննդամթերք, որի մակնշումը համապատասխանում է ՀՀ սննդամթերքի անվտանգության բնագավառը կարգավորող օրենսդրությամբ մակնշմանը ներկայացվող պահանջներին,

- օգտագործել չվերանշակված կենդանական ծագման մթերք (միս)՝ անասնաբուժական ուղեկցող համապատասխան փաստաթղթերով, իսկ տեղական արտադրության կենդանական ծագման չվերանշակված հումք՝ սպանդանոցային ծագման և ՀՀ կառավարության 21.10.2010թ. թիվ 1499-Ն որոշմամբ սահմանված ձև N5 անասնաբուժական վկայականի առկայության պարագայում,

- յուրաքանչյուր շաբաթվա հինգշաբթի օրը կազմել հաջորդ շաբաթվա 7 օրերի համար նախատեսված սննդի բաշխման ձևաթերթիկ, որը պետք է համաձայնեցվի ստորաբաժանման սննդի համար պատասխանատու անձի հետ և հաստատվի տվյալ ստորաբաժանման հրամանատարի կողմից: Բաշխման ձևաթերթիկում յուրաքանչյուր փոփոխություն կարող է կատարվել ՀՀ ՆԳՆ ոստիկանության գվարդիայի տվյալ ստորաբաժանման հրամանատարի թույլտվությամբ,

- յուրաքանչյուր օրվա ճաշացանկում նշված սննդատեսակներից առանձնացնել նմուշներ, որոնք պետք է պահպանվեն սառնարանում հատուկ կնքված տարաներում առնվազն 24 ժամ: Նմուշների պահպանության համար նախատեսված սառնարանները պետք է կահավորված լինեն ստուգաչափված ջերմաչափերով,

- յուրաքանչյուր աշիս՝ մինչև հաջորդ ամսվա ավարտը Պատվիրատուին ներկայացնել մատուցված ծառայությունների՝ անսակա հաճնան- ընդունման արձանագրություն՝ 4 օրինակից:

ՀՀ ՆԳՆ ոստիկանության գվարդիայի վերը նշված հասցեներում սննդի մատուցումը իրականացնել ՀՀ կառավարության 03.12.2015 թվականի 1456-Ն որոշման հավելված 3-ի չափաքանակներին համապատասխան՝ օգտագործելով նույն որոշման, նույն հավելվածով սահմանված սննդամթերքի փոխարինման չափաքանակները:

Կատարողը պետք է ապահովի ճաշատեսակների բազմազանությունը: Ճաշարաններում տեղադրված ինքնապատարկման հոսքագծերը պետք է կահավորված լինեն սեղանի ստուգաչափված կշեռքներով:

Մատուցվող ճաշատեսակներում չօգտագործել աղացած վիճակում գնված մսամթերք, այլ մսամթերքը բերել միայն չաղացած վիճակում, որը

բացառապես պետք է աղացած լինի ճաշարանի համապատասխան արտադրամատում:

Յուրաքանչյուր օր մատուցել նույն օրը սահմանված ժամին (Նախաճաշ, ճաշ, ընթրիք) սննդի ընդունման համար պատրաստված սնունդ: Ճաշատեսակների և սննդամթերքի մատուցումը պետք է համապատասխանեն տվյալ սննդամթերքի կամ ճաշատեսակի համար սահմանված՝ օգտագործման համար պիտանելիության (երաշխիքային) ժամկետներին և որակական հատկանիշներին:

Յուրաքանչյուր օր ճաշացանկում ներառել՝ առնվազն 2 տեսակի մսային ուտեստներ, առնվազն 2 տեսակի ապուրներ, առնվազն 2 տեսակի խավարտներ, առնվազն 2 տեսակի աղցաններ, առնվազն 2 տեսակի թարմ կոմպոտներ:

Մշտական տեղակայման վայրերում մշտապես պահպանել անձնակազմին օրական մատուցվող ճաշատեսակների, աղցանների և խավարտների բազմազանությունը, որոնք պետք է լինեն՝

նախաճաշին՝

- . երկու տեսակից ոչ պակաս խավարտ,
- . կաթնամթերք՝ շաքարով 4 օր, ճաշին՝

- . երկու տեսակից ոչ պակաս ապուր,
- . երկու տեսակից ոչ պակաս խավարտ,
- . երկու տեսակից ոչ պակաս աղցան,
- . երկու տեսակից ոչ պակաս մեղեղն,
- . թարմ կոմպոտ

ընթրիքին՝

- . երկու տեսակից ոչ պակաս խավարտ,
- . ձուկ, (բացառությամբ սյունբրիա, սարդինելլա, կարաս, հաստաճակատ տեսակների) կամ փոխարինման նորմերին համապատասխան քանակի միս,
- . խմելու ջուր առանց սահմանափակման, ջրի համապատասխան տարրաներով դիսպենսեր սարքերով:

ՀՀ ՆԳՆ ոստիկանության գլխաբիայում մտեղեն կերակրատեսակները պլանավորել ճաշի համար:

Կատարողը պարտավոր է, պայմանագրով նախատեսված միավոր գնով, ստանական օրերին ճաշարաններում սնվող անձնակազմին ապահովել տոնական ճաշով կամ ընթրիքով հետևյալ օրերին.

- հունվարի 1 (ճաշ)
- ապրիլի 16 (ճաշ)

- մայիսի 9 (ճաշ)
- մայիսի 28 (ճաշ)
- սեպտեմբերի 21 (ճաշ)
- դեկտեմբերի 31 (ընթրիք)
- ՀՀ ՆԳՆ ոստիկանության գվարդիայի կազմավորման օր (ճաշ):

4. Տաք սննդի մատուցման միավոր գին սահմանել 2750 (երկու հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

5. Արագ սնվելու հնարավորությամբ սննդի հավաքածուի մատուցման միավոր գին սահմանել 2970 (երկու հազար ինն հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

ՀՀ ՆԳՆ ոստիկանության գվարդիայի ծառայողներին տրվող սննդատեսակները պետք է ապահովեն ներքոնշյալ տեխնիկական պայմանները.

Կադապարային հաց 1-ին տեսակի ցորենի այլուրից  
 Համաձայն ՀՍ 31-2019 ստանդարտացման փաստաթղթի կամ արտադրողի ՏՊ-ի համաձայն:

Անվտանգությունը փաթեթավորումը և մակնշումը համաձայն Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՍՄ ՏԿ Ն 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՍՄ ՏԿ 022/2011), Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 20-ի N 58 որոշմամբ հաստատված «Սննդային հավելումների, բուրավետիչների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» (ՍՄ ՏԿ 029/2012), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 15-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթավածքի անվտանգության մասին» (ՍՄ ՏԿ 005/2011) տեխնիկական կանոնակարգերի:

Մարտական հենակետեր մատակարարվող հացը անհատական փաթեթավորմամբ:

Մատնաքաշ  
 Համաձայն ՀՍ 31-2019 ստանդարտացման փաստաթղթի կամ արտադրողի ՏՊ-ի համաձայն:

Անվտանգությունը փաթեթավորումը և մակնշումը համաձայն Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՍՄ ՏԿ Ն 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա

մակնշնան մատով» (ՄՄ ՏԿ 022/2011), Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 20-ի N 58 որոշմամբ հաստատված «Մենդային հավելումների, բուրավետիչների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» (ՄՄ ՏԿ 029/2012), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) տեխնիկական կանոնակարգերի:

Մարտական հենակետեր մատակարարվող հացը անհատական փաթեթավորմամբ:

Լավաշ

Համաձայն ՀՍՏ 398-2018 ստանդարտացման փաստաթղթի կամ արտադրողի ՏՊ-ի համաձայն:

Անվտանգությունը փաթեթավորումը և մակնշումը համաձայն Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Մենդայիների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ N 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Մենդայիների և հետատված «Մենդային հավելումների, բուրավետիչների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» (ՄՄ ՏԿ 029/2012), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) տեխնիկական կանոնակարգերի:

Մարտական հենակետեր մատակարարվող հացը անհատական փաթեթավորմամբ:

Հացաբուլկեղեն

Համաձայն ԳՕՍՏ 31805-2018, կամ ՀՍՏ 44-2007 ստանդարտացման փաստաթղթերի կամ արտադրողի ՏՊ-ի համաձայն: Անվտանգությունը փաթեթավորումը և մակնշումը համաձայն Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Մենդայիների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ N 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Մենդայիների և հետատված «Մենդային հավելումների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» (ՄՄ ՏԿ 029/2012), Մաքսային միության հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 20-ի N 58 որոշմամբ հաստատված «Մենդային

հավելումների, բուրավետիչների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» (ՄՍ ՏԿ 029/2012), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 15-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՍ ՏԿ 005/2011) տեխնիկական կանոնակարգերի: Բացառությամբ կրեմային լցնումներով հացաբովիլեղենի տեսակների:

Այլուր ցորենի 1-ին տեսակի

Համաձայն ՀՍ 230-2007 կամ ԳՕՍՏ 26574-2017 ստանդարտացման փաստաթղթերի կամ արտադրողի ՏՊ-ի համաձայն: Անվտանգությունը փաթեթավորումը և մակնշումը համաձայն Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Մենդամթերքի անվտանգության մասին» (ՄՍ ՏԿ N 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Մենդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՍ ՏԿ 022/2011), Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 20-ի N 58 որոշմամբ հաստատված «Մենդային հավելումների, բուրավետիչների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» (ՄՍ ՏԿ 029/2012), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 15-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՍ ՏԿ 005/2011) տեխնիկական կանոնակարգերի:

Այլուր ցորենի բարձր տեսակի

Համաձայն ՀՍ 230-2007 կամ ԳՕՍՏ 26574-2017 ստանդարտացման փաստաթղթերի կամ արտադրողի ՏՊ-ի համաձայն: Անվտանգությունը փաթեթավորումը և մակնշումը համաձայն Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Մենդամթերքի անվտանգության մասին» (ՄՍ ՏԿ N 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Մենդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՍ ՏԿ 022/2011), Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 20-ի N 58 որոշմամբ հաստատված «Մենդային հավելումների, բուրավետիչների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» (ՄՍ ՏԿ 029/2012), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 15-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՍ ՏԿ 005/2011) տեխնիկական կանոնակարգերի:

Հնդկաձավար

Համաձայն ԳՕՍՏ 5550-2021 ստանդարտացման փաստաթղթի կան արտադրողի ՏՊ-ի համաձայն:

Անվտանգությունը փաթեթավորումը և մակնշումը համաձայն Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 874 որոշմամբ ընդունված «Հացահատիկի անվտանգության մասին» (ՄՍ ՏԿ Ն 015/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Մենդամթերքի անվտանգության մասին» (ՄՍ ՏԿ Ն 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Մենդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՍ ՏԿ 022/2011), Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 20-ի N 58 որոշմամբ հստատված «Մենդային հավելումների, թուրավետիչների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» (ՄՍ ՏԿ 029/2012), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՍ ՏԿ 005/2011) տեխնիկական կանոնակարգերի:

Ցորենաձավար

Համաձայն ԳՕՍՏ 276-2021 ստանդարտացման փաստաթղթի կան արտադրողի ՏՊ-ի համաձայն:

Անվտանգությունը փաթեթավորումը և մակնշումը համաձայն Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 874 որոշմամբ ընդունված «Հացահատիկի անվտանգության մասին» (ՄՍ ՏԿ Ն 015/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Մենդամթերքի անվտանգության մասին» (ՄՍ ՏԿ Ն 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Մենդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՍ ՏԿ 022/2011), Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 20-ի N 58 որոշմամբ հստատված «Մենդային հավելումների, թուրավետիչների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» (ՄՍ ՏԿ 029/2012), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՍ ՏԿ 005/2011) տեխնիկական կանոնակարգերի:

Հաճարաձավար

Համաձայն՝ արտադրողի տեխնիկական պայմաններին:

Անվտանգությունը փաթեթավորումը և մակնշումը համաձայն Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 874 որոշմամբ ընդունված «Հացահատիկի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ N 015/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Մնորամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ N 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Մնորամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 20-ի N 58 որոշմամբ հաստատված «Մնորային հավելումների, թուրավետիչների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» (ՄՄ ՏԿ 029/2012), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) տեխնիկական կանոնակարգերի:

Բրինձ 1-ին կարգի

Համաձայն ԳՕՍՏ 6292-93 ստանդարտացման փաստաթղթի կամ արտադրողի ՏՊ-ի համաձայն:

Անվտանգությունը փաթեթավորումը և մակնշումը համաձայն Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 874 որոշմամբ ընդունված «Հացահատիկի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ N 015/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Մնորամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ N 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Մնորամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 20-ի N 58 որոշմամբ հաստատված «Մնորային հավելումների, թուրավետիչների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» (ՄՄ ՏԿ 029/2012), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) տեխնիկական կանոնակարգերի:

Ոսպ

Համաձայն ԳՕՍՏ 7066-2019 ստանդարտացման փաստաթղթի կամ արտադրողի ՏՊ-ի համաձայն:

Անվտանգությունը փաթեթավորումը և մակնշումը համաձայն Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 874

որոշմամբ ընդունված «Հացահատիկի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ N 015/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Մենդաթերթի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ N 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Մենդաթերթը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 20-ի N 58 որոշմամբ հստատված «Մենդային հավելումների և թորավետիչների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» (ՄՄ ՏԿ 029/2012), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) տեխնիկական կանոնակարգերի:

Ոլու:

Համաձայն ԳՕՍՏ 6201-2020 ստանդարտացման փաստաթղթի կամ արտադրողի ՏՊ-ի համաձայն:

Անվտանգությունը փաթեթավորումը և մակնշումը համաձայն Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 874 որոշմամբ ընդունված «Հացահատիկի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ N 015/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Մենդաթերթի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ N 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Մենդաթերթը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 20-ի N 58 որոշմամբ հստատված «Մենդային հավելումների և թորավետիչների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» (ՄՄ ՏԿ 029/2012), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) տեխնիկական կանոնակարգերի:

Լոբի

Համաձայն ԳՕՍՏ 7758-2020 ստանդարտացման փաստաթղթի կամ արտադրողի ՏՊ-ի համաձայն:

Անվտանգությունը փաթեթավորումը և մակնշումը համաձայն Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 874 որոշմամբ ընդունված «Հացահատիկի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ N 015/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի

